

# Apazgaynac'owmë : ejer Veraçnownden

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Hampartsoumian, L.. Apazgaynac'owmë : ejer Veraçnownden. 1920.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

ՏՕՔԹ. Լ. ՉԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

( ԷՋԵՐ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԷՆ )

ԱՊԱՋԳԱՅՆ ԱՑՈՒՄԸ



ՓԱՐԻՉ 1920

Հրատարակումիւն եւ տպագրումիւն

ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ



ԲԱՐԵԿԱՄԻՍ

Յ. Ք Է Չ Է Ճ Ե Ա Ն Ի Ն



# ԱՊԱՋԳԱՅՆ ԱՅՈՒՄԸ

## Ա.

Ապագգայնացումը, ահա ամենէն աւելի կարեւոր հարցերէն մէկը, որուն մեծ չափով պարտաւոր են ուշադրութիւն դարձնել բոլոր անոնք, որոնք համաքաղաքացիական վարդապետութիւններէ հեռու, մարդկութեան յառաջդիմութեան ազդակներէն մէկը կը նըկատեն ազդերու ուրոյն քաղաքակրթութեան դարգացումը:

Մենք՝ ի մասնաւորի Հայերս, որ կը հաւակնինք, իրաւամբ ու արդարացիօրէն, շատ վաղնջական ժամանակներէ ի վեր մինչեւ այս օրերս, բոլորովին ուրոյն քաղաքակրթութիւն մը մշակածը լլալ, -- դժբաղդարար ազգին առանձնայատուկ արժէքներուն բոլոր ճիւղերուն մէջ հաւասարապէս և ամբողջական չափով պեղումներ և ուսումնասիրութիւններ չեն կատարուած և բարեբախտաբար հակառակ անոնց, գրեթէ ապա-



D4724

ցոյցի արժէքով հաւաստիքներ չեն որ կը պակսին ցոյց տալու համար, որ ոչ միայն մեր զրահանութեան մէջ, այլ և ճարտարապետութեան և մանրանկարչութեան, և մանաւանդ ճարտարապետութեան մէջ ունեցած են քրտորովին ինքնայատուկ կառուցման procédé մը և ոճ մը, — տարօրինակ հակադրութեամբ մը կը ներկայացնեն ք միւս կողմէն այս արժէքներու ծնունդին բոլորովին հակառակ եղող պատճառներու յառաջացեալ երեւոյթները:

Այսպէս, մեր ազգին բաղմադարեան կիանքն իսկ ապացոյց է, որ այս ազգը արժէքաւորող բաղմաթիւ տուեալներ ծնունդ տուած են և իր անդամները դիտցած են աւանդապահութեան և բնազդական մղումներու շնորհիւ մինչեւ այսօր պահել իրենց ուրոյն դոյութիւնը, անօրինակօրէն ալեկոծ և վերիվայր դարերու կեանքի մը մէջէն:

Միւս կողմէ, ճիշդ այդ իսկ կեանքի եղելութիւններու բերումով, աշխարհի չորս կողմերը ցրուելու հարկադրուած մեր ազգը տասնեակ հազար անդամներով իր ինքնութիւնը ուրիշ ազգերու մէջ ձուլած ըլլալու պատմական փաստերը տուած է մեզի:

Ապագգայնացումը շատ տեսակներ ունի և դանազան միջավայրերու մէջ դանազան չափերով ու ձևերով երեւան կ'ուզայ. դանազան դասակարգերու մէջ տարրեր արտայայտութիւններով և ուժղնութեամբ ու տարրերութեամբ ծնունդ կ'աննէ, անիկա:

Այս կամ այն ազգերու պատկանող ժողովուրդներուն մէջ գոյութիւն ունեցող անտեսական դերակրչ-



ոււթիւնը, կրօնական տարբեր դաւանանքներու յարումը, զանազան վայրերու մէջ ազգաբնակչութեանց թուական շատութիւնը, տիրապետող ազգութեանց կրթական կանոնադրութիւնները, քաղաքական իրաւունքներու չափը և շատ մը ուրիշ պատճառներ տարբեր ժամանակներու և միջավայրերու մէջ հաւասարապէս հիմնական առիթներ հանդիսացած են, յետոյ՝ բարքերու, սովորոյթներու փոխանցումը պարտադրելով հպտակ ազգութիւններու վրայ, որ մեծ պետութիւններուն մէջ ինկած փոքրիկ ազգութիւնները կուլ երթան անոնց:

Ասով երբեք ըսել չենք ուզեր որ ուժեղ պետութիւններ, տիրապետուած փոքրիկ ազգերը բոլորովին կուլ կ'երթան, կը ձուլուին անոնց մէջ եթէ նոյն իսկ իրենք քաղաքակրթապէս աւելի բարձր են քան թէ տիրապետողները, ո՛չ, բայց պատմական իրականութիւն է նոյնպէս որ յիշուած պատճառները զոնէ մասնակիօրէն առիթ եղած են այս կամ այն չափով, որ տիրապետողները մեծ մասով խտանուին, կորսուին տիրապետողներուն մէջ:

Վերը մեր յիշած ազգայնացման բազմաթիւ ստորաբաժանումները ու զանազան արտայայտութիւնները ցոյց կուտան արդէն որ անիկա ընդարձակ և բարդ խնդիր մըն է՝ կարօտ տեղեկազրական փաստերու և պատմական ուսումնասիրութիւններու, և միևնոյն ժամանակ չափազանց կարեւոր այն բոլոր փոքրիկ ազգերուն համար, որոնց մէկ մասը դիտակից իրենց տահմային արժէքներուն և իրա-

ւունքներուն՝ կ'աշխատի կոյր ուժգնութեամբ մը, արեւին տակ փոքրիկ տեղ մը ճարել գոհողութեան ամէն դիներով, անոր ճառագայթներու մէջ ազգային մշակոյթին ազատ ու լայնաթափ զարգացմանը համար:

Մենք սկնարկ մը ձգել պիտի ուղէինք միայն ապագգայնացման խնդրին մէկ փուլին վրայ, այն փուլին՝ որ երեւան կուգայ մեծ պետութիւններու մէջ անած այսպէս ըսելու համար, զարգացած դասի մէկ մասին մէջ, դիւատորաբար զուտ իրապաշտ բըժիշկներու, փաստաբաններու, վաճառականներու և վերջապէս համադասակարգ «մեծ ազա»ներուն մէջ:

Մարդ չափով մը ներողամտութեամբ կը վերաբերի այն զանգուածային ապագգայնացումներուն հանդէպ, որոնք կը կատարուին անդիտակցութեան մէջ և արդիւնք են միջավայրի անողոք պահանջներուն. մնաց որ ասիակ տեղի ունեցած է ժողովրդական տղէտ դասակարգին մէջ, որուն անդամները՝ գաւառներու և գիւղերու աւանդապահ բնակչութիւնը, գործատուութիւնն ու ազրատ արհեստատուութիւնը, շա՛տ աւելի ուժեղ փարած՝ է իր լեզուին, իր կրօնքին, իր ցեղային բարքերուն ու սովորոյթներուն և ասիկա երբեմն ա՛յնքան ուժեղ, որ՝ դաւանէն օտար միջավայրի մը մէջ ինկած մէկ գիւղացիին համար ամբողջ տասնեակ տարիներ չեն բաւեր ատանց շեշտի նոր լեզուն խօսելու և կամ իր սովորութիւնները փոխելու:

Մեր յիշած այդ դասակարգին մէջ գոյութիւն ունեցող ապագգայնացումն ալ երկուքի կը բաժնուի:

1.— Ապագագայնացում այն խմբաւորման մէջ, որ  
կը ծնին, կը դաստիարակուին օտար միջավայրի մէջ  
և օտար կրթութեամբ, որոնք յաճախ իրենց հայ  
ըլլալն ալ չեն գիտեր կամ առ նուազն չեն ճանչնար  
բնաւ հայ ազգը (այս խումբին մէջ կայ ասիական  
թիւով ուսանողութիւն մը):

2.— Ապագագայնացում, այն խումբին մէջ որոնք  
սկզբունքով, գիտակցաբար, կ'ընդունին ժխտել և ու-  
րանալ իրենց ազգը:

Այս երկրորդ ստորաբաժանման մէջ արդէն մտքի  
և խղճի վատառողջութիւնն է և որուն դէմ պէտք է  
ուղղուին բոլոր փրօփականափ գէնքերը: Այս տեղ  
ապագագայնացումը մասնաւոր հանդամանք մը ունի, այն  
է թէ՛ կարծէք հոս գիտակցական մոլորութիւն  
մը և ատելութիւն մը կայ իր ազգին հանդէպ և կոյր  
ու սարուկ օտարամոլութիւն մը, վախկոտ ու քծնող  
մեծարանք մը այն պետութեան համար, ուր իյնալու  
դժբախտութիւնը ունեցած են:

Բոլորովին մեր նպատակին մէջ չ'իյնար այս եղա-  
նակով նրբազգածութիւնը շօշափել այդ դասակարգին  
պատկանող շատ յարգելի խումբ մը բացառութիւն-  
ներուն, որոնց ազդօղուածառայութիւնները գնահատ-  
ուած են միշտ մամուլին կողմէ:

Միայն վերջերս, ապագագայնացման խնդրէն պա-  
տահաճ քանի մը դէպքեր առիթ տուին այս խորհր-  
դածութեանը՝ և ես գայն կ'արժարձեմ, միշտ համոզ-  
ուած ըլլալով որ՝ իսկական գիտակցութեան մը ի  
խնդիր կատարուած փրօփականութիւնը և այս կարգի աշ-

խատանքներու մղումը առաւելապէս այս դասակարգին մէջ ապարդիւն չեն և նոյն իսկ շատ զեղեցիկ ու առատ պաղաքերը մը յուսատու կը դարձնեն:

Միայն պիտի արձանադրեմ այս էջերուն մէջ վերջերս պատահած այդ դէպքերէն մէկ քանին, որոնք բնօրինակը, թիփը կը կազմեն այս չարազէտ խնդրին մէջ և որոնց բազմաթիւ տեսակները ամէն ժամանակ և ամէն տեղ այնքան յաճախազէպ կողած են և կ'ըլլան:

### Բ.

Բարեկամներէս մին՝ հետեւեալը պատմեց Տօքթ. Նի մասին. «Տօքթ. Նի ամենէն մօտ բարեկամներէն մէկը, որ ինծի ալ բարեկամ է, ցոյց տալու համար իր չափազանց բարի պատրաստակամ բնաւորութիւնը, յանձնարարական նամակի մը տեղ, խնդրեց իր կնոջմէն ինծի բնկերանալ: Տօքթ. Նի սրահն ենք, ուր յաճախորդ մը կու կայ սպասող: Տօքթ. Ն յանկարծ կը բանայ իր առանձնատենակին դուռը և սրահէն անցնելու պահուն զխոնականի յաւակնտա խոժոռութեամբ երկար տկնարկ մը կը ձգէ բարեկամիս կնոջը վրայ և երկու քայլ առնելէ, յետոյ միայն կը նշմարէ միւս յաճախորդը: Յանկարծ խոժոռ զկմբր կը պայծառանայ, Տօքթ. Ն կտ կը դառնայ, օտարականին ձեռքերը սեղմելով հաճոյակատար շեշտով մը,

—Bonjour, Mr... X, comment ça va, et votre maman ?  
 Լն. Լն. և դեռ ժպիտն ալ վրան ձղելով կը հեռանայ  
 քաղցրութեամբ:

«Նոր յաճախորդ մը ներս կը մտնէ, որուն ձեռքերը ու գոգնոցը հաւաստիքներն էին որ սպասուհիէ  
 դատ ուրիշ բան չէր կրնար ըլլալ անիկա:

«Տօքթ. Նի առանձնասենեակին դուռը անդամ մը  
 եւս կը բացուի, Տօքթօրը ակնոցներուն տակէն ան-  
 դամ մը եւս աչքը կը պտտցնէ սալոնին մէջ և սպա-  
 սուհիին քովէն անցնելով, ձեռքի սեղմում մը և ժպիտ  
 մը բաշխելով անոր դուրս կ'ելլէ:

«Ես ճնշուած էի, խորհելով որ բարեկամիս կինը  
 չպիտի ուզէր թերեւս այդ վիրաւորիչ անուշադրու-  
 թեան հանդիպիլ իմ ներկայութեանս:

«Վերջապէս, կարգը մեզի կը հասնի. ներկայաց-  
 ուելէ յետոյ կը բացատրեմ, իրեն պէտք ունենալուս  
 պատճառները: — Monsieur, parlez en français. je vous  
 prie; je ne comprends pas bien votre langue.

«—Տօքթէօր, ես գիտեմ որ դուք լաւ հայերէն գի-  
 տէք. մնաց որ եթէ լաւ ալ չէք գիտեր, ես սովորու-  
 թիւնս անիմ հայերուն հետ հայերէն խօսելու:

«Տօքթ. Ն ահաճութեան և արհամարհանքի գրդ-  
 ուտպին ծամածոտիւն մը կը ձեռացնէ և կը սկսի  
 ատելութեան և պարտաւանքի երկար ճառ մը կար-  
 դալ, միշտ ֆրանսերէն, այս կողմիս հայերուն հա-  
 մար, որոնք ուրիշ երկրի մէջ իսկ մարդ չեն ըլլար:

«Չեւականութեան համար կատարուած բժշկական  
 քննութեան ըտզոր ընթացքին ես շարունակեցի բառ

մը ֆրանսերէն չարտասանել և պահանջեց որ մէկիկ մէկիկ անուանա զիրերը ըսեմ իրեն, արձանադրելու համար, ցոյց տալով որ չափազանց դժուար է իրեն հնչել այդ տեսակ անուաններ:

«Դրան վրայ, հրաժեշտի պահուն, ինչպէս աւագա-  
կը որ դործի սկսելէ առաջ կասկածուա իր չորս կողմը  
կը նայի, Տօքթ. X շրջապատը ակնարկով մը խու-  
ղարկելէ յետոյ դարձաւ բարեկամիս տիկնոջը և շատ  
մաքուր հայերէնով մը— Տիկին, երեւակացե՛ք, պարո-  
րոնը ֆրանսերէն ըստ մը չ'արտասանեց, ինծի չափա-  
զանց դժուար է նման յաճախորդներ ընդունիլ. ևս  
սալոնին մէջ յաճախորդներ ունիմ որոնք կը լսեն,  
երեւակացե՛ք:— Կրկին անգամ ակնարկով մը չորս  
կողմը նայելէ և ապահովուելէ յետոյ կը շարունակէ,—  
ևս անունս իսկ փոխած եմ. ամբողջը ինծի ֆրանսա-  
ցի դիտեն, եթէ յիմար գաղափարներու համար ամէն  
տեղ պտտամ թէ օտարական եմ, ամբողջ օրը պիտի  
սպասեմ որ մէկ հատ յաճախորդ ընդունիմ:»

«Չափազանց բնկճուած՝ դիմացս կանգնած այդ  
ակնուցատուր արարածէն, դանդաղութեամբ այնքան  
միայն ըսի, որ մեր ազգին թիւը ևուսպատիկ, քառա-  
պատիկ աւելի մեծ պիտի ըլլար, եթէ հայրենիքէն  
դուրս իր հոգեքանութիւնը ունեցող ամբողջ դասա-  
կարգեր չ'ըլլային:

«Ակնուցներուն տակէն երկարօրէն և յամառօրէն  
նայեցաւ ինծի, որպէս թէ մանուկի մը անմատթիւնը  
դիտէր, հետզհետէ հեղնակաւ ժպիտ մը ձևացուց  
չրթունքներուն ծայրերը և դիտային քրքիչով մը դու-

որ զոցելէ առաջ փափաաց կտեւնուս.— Հը՛, ի՞նչ կը փնտոէք, հիմա ան ալ չկայ»:

Ոչինչ կրնամ աւելցնել որ ըլլայ աւելի պերճախօս քան այս փոքրիկ պատահարը ինքն իսկ:

Մէջ կը բերեմ ահա հետեւեալ ֆրանսերէն համակր դոր խմբագրութիւնս ստացած է վերադարձած վերածնունդ ներու հետ ուրիշ Տօքթէօրի մը կողմէ, որուն խմբագրութիւնս ուղած էր թերթը դրկել:

«Պարոն, կը խնդրեմ որ այլ եւս ձեր թերթը չի դրկէք ինձի, որովհետեւ հայերէն չեմ գիտեր կարդալ:

«Յատկով որ չպիտի կրնամ ընդունիլ գայն, ընդունեցէք բարեւերս»:

Այս համակի բազմաթիւ տեսակներէն տասնեակներ կուդան խմբագրութեանս, որոնց մէկ հմայշն է այս:

Մինչեւ որ ունենանք մայրենի ազատ հող մը ուր մեր լեզուն իրեն հոյակապ հնչուածովը դարձանայ, ուր մեր պատմութիւնը, մեր աւանդութիւնները անընդհատ համուղ հայ մանուկներու մտքին մէջ գրոշմուին, ուր մեր առհմիկ արժէքները՝ զրականութիւնը, ճարտարարուեստը, կեանքը, կենցաղը բարքերը ազատօրէն ու լայնօրէն յառաջ գիմեն, անհրաժեշտ է մաքառիլ գաղութներու մէջ ճարակող այս հիւանդութեան գէմ:



## ՈՍԿԵԶՕԾ ՎՏԱՆԳԻՐ

Նախորդ գլուխներով աշխատեցանք ակնարկ մը ձգել կարգ մը դասակարգերու մէջ տիրող դիտակցական ապագգայնացումներու երեւոյթներու վրայ:

Գաղութներու մէջ օտարացումը՝ ամուր քալումով մը ստաջ կ'երթայ ապագգայնացման մէկ ուրիշ պատճառով մըն ալ, օտար ամուսնութիւնն է այն:

Այս ահարկու պատերազմը վերջ դրաւ ըստի ազգերուն ալ մէջ միլիոնաւոր արուներու կեանքին. հայ ազգը ամենէն աւելի տուժեց, որովհետեւ անխիտ ոչ միայն ռուսական, կովկասեան, ֆրանսական, տաճկական և այլ ճակատներու վրայ արիւն թափեց, այլ և իր ամենէն աւելի կենսունակ մէկ ահադին մասը թրքահայաստանը դրեթէ ոչնչացաւ թրքական անուրակելի սճիրներովը:

Այս բոլոր մեծ աղէտներէն գերծ մնացին արտասահմանի գաղութները, որոնց իւրաքանչիւրին վրայ կ'իյնար շատ նուիրական և ծանր պարտականութիւններ: Անդին երբ կեանքերը ամենափոքր շարժումով մը վտանդի տակ կը գրուէին, պէտք էր որ ասդին դիտակից կարեկցութեամբ մը նխախական գոհագութիւններ ի սպաս գրուէին:

Երբ անդին ստեղծելու հազիւ ապատած մահուան մօտիկ հիւրընկալ վայր մը կ'իյնային ազգին այդ բեկորները, պէտք էր որ ասդին գոնէ մեծ,



շատ մեծ նիւթական աջակցութիւններով անոնց ֆիզիքական կեանքը անպահովէին:

Երբ անդին կարիճներ ամենաանձուկ պայմաններու մէջ հերոսաբար կ'իյնային անհաւատար կռիւներուն մէջ, պէտք էր որ ասդին լուրջ և յարատեւ աշխատութեամբ՝ անոնց արիւնով ներկուած հոգամասերուն իրաւատէր նկատել տային զանոնք:

Երբ անդին կարաւան կարաւան մատաղահաս աղջիկներ և նորապսակ այրիներ անտէր ու թշուառութեան մէջ պիտի մեռնին, պէտք է որ ասդին հայերիտասարդութիւնը իր ազգին և անոնց թշուառութեան զիտակցութիւնը ունենայ ու առաջին իսկ անխիթով երթայ այդ անզոյզներէն զոյգեր ստեղծել:

Բայց նայինք թէ ի՞նչ և ի՞նչպէս տեղի կ'ունենայ զաղութներու մէջ:

Բնոյհանրապէս զոյգի մը մէջ (ի հարկէ միշտ Հայն է որ կը բաղդատեմ որ և իցէ մէկ օտարի հետ) Հայր տղան է որ կ'ըլլայ, շատ քիչ կը պատահի որ օտար մը հայ կին առնէ: Արդ, առաջին պարագային մէջ երկու գրութիւն կրնայ ստեղծուիլ. Ա. — կամ այն է որ տղան մէջ ազգային տարրերը աւելի ուժեղ են և հետեւաբար կրնան դերիշխել աղջիկներուն վրայ. կամ թէ Բ. — աղջկան ազգային տարրերը աւելի զօրաւոր են քան տղայինները:

Առաջին պարագան շատ մը բերումներով կը զըժուարանայ և հազուադէպ կը դառնայ. որովհետեւ եթէ նոյն իսկ տղան մէջ ազգային կրթութիւնը աւելի զօրաւոր է, կ'առիպուի տեղի տալ և ենթարկուիլ աղ-

Ջրկանը, ապրելով աղջկանը միջավայրին մէջ աւր խօսակցական լեզուն աղջիկինն է. սովորութիւնները, բարքերը, դրութիւնները և ամէն ինչ աղջիկինն են: Ուրեմն այս լաւազոյն պարազային մէջ իսկ արդէն ոչ միայն կարելի չըլլար որ ազան ազդէ իր կնոջը վրայ, այլ ինք է որ կ'ենթարկուի:

Երկրորդ պարազային մէջ արդէն խօսք չիկայ որ նորէն կնոջը ազդին ինքնութիւնն է որ կ'իշխէ արդուն վրայ և որ ասոնց դաւաններն ալ հետքի նշոյլ մը իսկ չեն կրեր ազուն ազդին ինքնայատկութենէն:

Տարակոյս չկայ, որ մենք այս երկույթներուն ընդհանրութիւնն է որ նկատի կ'առնենք. շատ լատիանալով, նոյն իսկ ճանչնալով կիներ, օտար կիներ՝ որոնք նոյն իսկ իրենց ամուսիններէն աւելի սիրած են անոր ազգը ու դժբախտ ճակատագիրը:

Մինչեւ հիմա մենք հարցը դիտեցինք ազգային կորուստի տեսակէտէն, այժմ նայինք թէ ի՞նչ դրութիւն կը տիրէ, բնատնկա՞ն հանդատութեան և երջանկութեան ի՞նչ պիտի եղանակ կ'ստեղծուի այս խառնուրդներուն մէջ:

Հայ երիտասարդը, բանտարը, իր հայրենիքէն ելնելով Ամերիկայի մէկ անկիւնը կամ Եւրոպայի ու կէ վայրը ինկած է թէ՛ն, բայց շատ անսովոր և ուժգնօրէն կը պահէ իր մէջ հայրենիքին սովորութիւնները, պահանջները, դրութիւնները որոնցմով կնոջ մը հետ կը վարուին: Արդ, մեծաւ մասամբ իրենց օտար զոյգերուն մէջ չեն կրցած դանել այն պահանջներն ու բաւարարութիւնները որ պիտի դանէին հայ կնոջ

մէջ: Երբեք չեն կրցած դանել այն կուռ սերն ու խնամքը որ հայ կիները կուտան իրենց ընտանիքին եւ դատակներուն:

Երբեք անոնց մէջ չի ստեղծուիր այն մտերմութիւնը որ հայ կիներն բղխելով հայ երիտասարդին ամբողջ երջանկութիւնը պիտի կազմէր:

Օտարուհիները ընդհանրապէս հայ երիտասարդին պահանջներուն հանդէպ այնպիսի հակադրութիւն մը կը կազմեն որ խաղաղարար բոյնի մը ստեղծուելը դրեթէ հազուադէպ եղած է:

Փարիզի Հայոց Հոգեւոր Հովիւը իր պաշտօնին բերումով մօտիկ այս խնդրոյն՝ ըսած է ինձի որ քանի քանի հայ երիտասարդներ օտար ամուսնութենէ լետոյ եկած եւ զղջում յայտնած են իր տուած խրատներուն չհետեւելնուն համար:

Այսպէս ուրեմն, արտաքին մէկ քանի խաբուսիկ գրաւչութիւններէ տարուած, այս երեւոյթին ծաւալումը ոչ միայն լուրջ վտանգ մըն է ազգային տեսակէտով, այլ և նոյն իսկ իրենց անձնական երջանկութեան տեսակէտով:

Ահա թէ ո՛ր է ո ս կ ե դ օ ծ վ տ ա ն ո ղ ը: Արտասահմանի բոլոր հայ երիտասարդներ, աչքերնիդ բացէ՛ք, դարերէ ի վեր ակնկալուած արշալոյսս ահա մեծափառօրէն կը ծագի. թօթափեցէ՛ք օտար բարքերու մէջ ձեր համեատ անձին վիրաւորուած արժանապատւութիւնը, զլուխնիդ հո՛ն դարձուցէ՛ք որ թէև արցունքոտ՝ բայց կարմիր այտերով հայ ազջիկներու և ամօթխած սյրիներու քով երջանկութեան համբոյրը կ'ըստգաս, ձեզի:

489749



